ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 12-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2021 թվականի հունվարի 22-ին, ժամը 15.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 22-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

2. Համայնքի ղեկավարի հաղորդումն Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

3. Ալավերդի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 84-Ն որոշմամբ հաստատված Ալավերդի համայնքի 2021 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

4. Ալավերդի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 79-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

5. Ալավերդի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 80-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. հունվարի 20
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 11-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 1/16 շենքի արևելյան մասում գտնվող, 0.00408 հա մակերեսով (ծածկագիր՝ 06-002-0150-0001-ից) հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/16-46/2 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. հունվարի 19
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 10-Ա

06-002-0101-0029 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԾԱԾԿԸ ԵՎ 0.12 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.0087 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 1-ին և 3-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ բնակելի տունը, ծածկը չեն խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Անդրանիկ Սերյոժայի Մոսինյանի դիմումը, անձնագրի պատճենը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 23.12.2019թ. թիվ 50 տեղեկանքը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01.12.1993թ. N 20/9 որոշման քաղվածքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0101-0029), 1985 թվականին կառուցված բնակելի տունը, ծածկը ինչպես նաև կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0.12 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը և ավել օգտագործվող սահմանազատված 0.0087 հա մակերեսով հողամասը, Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի

ուժով համարել Անդրանիկ Սերյոժայի Մոսինյանի (ծնված՝ 07.02.1964թ.) սեփականությունը:

2. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, փողոց 6, նրբանցք 1, N 10 փոստային հասցե:
3. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. հունվարի 19
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 9-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 1271723 վկայականը, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից 08.01.2021թ. տրված N 1 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Լոռու մարզի Հաղպատ գյուղի ակումբին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 1, N 16 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. հունվարի 18

ք. Ալավերդի